ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ստեփանյան Հայկ Վահանի

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿԻՆՈՅԻ ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՁԵՎԱՉԱՓԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԹԵՐՈՒՄ

Ժ.01.06 - «Ժուռնալիստիկա» մասնագիտության բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-ռուսական համալսարանում

Գիտական ղեկավար՝ **ԵՐԻՑՅԱՆ ՍԵՐԳՈ ՍԱՐԳՍԻ**

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ **ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ**
ՊԱՐԳԵՎԻ

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՍՏՂԻԿ ՇԱՄՍԻ
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2018 թ. հուլիսի 11-ին՝ ժամը 12:00-ին, ԵՊՀ-ում գործող՝ ԲՈՀ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 25, Աբովյան 52ա, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունիսի 9-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ **ՄԱԿԱՐՅԱՆ ԱԼԲԵՐՏ ԱՐՇԱՎԻՐԻ**
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է հայաստանյան հեռուստաընկերությունների եթերում առկա վավերագրական և

գեղարվեստական կինոնկարների ծրագրավորման և ձևաչափի առանձնահատկությունների ուսումնասիրությանը:

Մեր օրերում անհնար է պատկերացնել հեռուստատեսությունը առանց կինոյի՝ թե՛ վավերագրական և թե՛ գեղարվեստական: Կինոն ոչ միայն ժամանակակից հեռուստատեսային ծրագրի անբաժան մասն է, այլև արվեստի այն տեսակը, որը մեծապես նպաստել է հեռուստատեսության ստեղծմանն ու կայացմանը: Հեռուստատեսությունը՝ որպես էկրանային ինքնուրույն արվեստ, ձևավորվել է՝ օգտվելով կինոյի կուտակած մեծ փորձից, էկրանավորման, լեզվաոճական, գեղարվեստական արտահայտչամիջոցներից, մոնտաժային հիմունքներից: Բացառություն չէ նաև Հայաստանի հեռուստատեսությունը: Իր ստեղծման առաջին իսկ օրերից մեծ կինոն չի իջնում փոքր էկրաններից[1]:

Սույն ատենախոսության խնդրո առարկան Հայաստանի հեռուստատեսությունն - կինո անխզելի կապի ուսումնասիրությունն է, հեռուստաընկերությունների եթերացանցում առկա վավերագրական, գեղարվեստական կինոյի ծրագրավորման և ձևաչափի առանձնահատկությունների հետազոտումը, կինոյի տեսակների, նրա թեմատիկ ուղղվածության, գործառույթների դասակարգումն ու հիմնավորումը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տեղեկատվական, թվային տեխնոլոգիաների, համացանցի դարաշրջանում տեղի են ունենում փոփոխություններ, որոնք մեծապես ազդում են ինչպես հեռուստատեսային արտադրանքի ձևաչափային և բովանդակային բաղադրիչների, այնպես էլ հեռուստաընկերությունների ծրագրավորման քաղաքականության, ժամանակակից լսարանի ձևավորման, հեռուստատեսության տեխնիկական վերազինման վրա: Տեխնիկական առումով հեռուստատեսությունն այսօր գրեթե չի զիջում կինոյին, քանի որ թվային հեռուստատեսությունը հնարավորություն է ընձեռում հեռարձակելու բարձր որակի հեռուստապատկեր, օգտագործելու նկարահանման թվային տեսախցիկներ, մոնտաժային գերժամանակակից սարքավորումներ, համակարգչային գրաֆիկա և կինոարտադրության այլ հնարքներ: Կինոէկրանի և հեռուստաէկրանի տեխնիկական հատկանիշների նույնականացման, ինչպես նաև տեղեկատվական ազատ դաշտի ստեղծման արդյունքում փոփոխություն է կրում հեռուստատեսային

[1] Հայաստանի հեռուստատեսությունն իր կանոնավոր գործունեությունն սկսել է 1956 թ. նոյեմբերի 29-ից, և արդեն առաջին իսկ եթերում ցուցադրվել է գեղարվեստական կինոնկար:

ծրագրավորումն ու ֆիլմարտադրությունը: Հետևաբար, հաշվի առնելով նաև հեռուստալսարանի նոր սերնդի ձևավորման հանգամանքը, Հայաստանի հեռուստաընկերությունների եթերում առկա վավերագրական և գեղարվեստական կինոյի ծրագրային միտումների, ձևաչափային բազմազանության, կինոնկարների թեմատիկ ուղղվածության և բովանդակության, գործառույթների վերլուծությունը հանդես է գալիս որպես արդիական խնդիր:

Անդրադառնալով թեմայի ուսումնասիրվածությանը՝ նշենք, որ վերջինիս միջառարկայական բնույթը ընձեռում է հետազոտությունների լայն հնարավորություններ: Հայաստանի հեռուստատեսությանը, գործառույթներին, ներկա միտումներին և հեռանկարներին են ուղղված մի շարք արժեքավոր հետազոտություններ: Նշենք Սերգո Երիցյանի[2] հայտնի ծավալուն աշխատությունները: Կարելի է առանձնացնել նաև հեռուստատեսության պատմությանը, ծրագրավորման, ձևաչափային առանձնահատկություններին, վավերագրական և գեղարվեստական կինոյին, հեռուստատեսության հետ կապին ուղղված Աննա Երզնկյանի, Վահագն Զաքարյանի, Վահրամ Միրաքյանի, Աստղիկ Աբրահամյանի, Աստղիկ Ավետիսյանի, Վանիկ Հակոբյանի, Գայանե Փաշայանի, Կարինե Տիտանյանի, Սիրանույշ Գալստյանի, Կարեն Քալանթարի բազմակողմանի ուսումնասիրությունները[3]:

---

[2] Տե՛ս **Երիցյան Ս. Ս.**, Ժամանակակից հեռուստատեսություն. Բովանդակության և ձևի որոնումներ, Էդիթ Պրինտ, Ե., 2010, Հայաստանի հեռուստատեսություն. Զարգացման 50 տարի, Տիգրան Մեծ, Ե., 2007, Հեռուստահաղորդում. մտահղացումից մինչև եթեր: (Հեռուստալրագրության տեսության և արվեստի հարցեր), Էդիթ Պրինտ, Ե., 2007, Հեռուստատեսություն: Գործառույթները, զարգացման միտումները և հեռանկարները, Մանկավարժ., Ե., 2005, Հեռուստատեսային տերմինների և հասկացությունների տեղեկատու բառարան, Էդիթ Պրինտ, Ե., 2008:

[3] Տե՛ս **Երզնկյան Ա.**, Հայ դասական գրականության և թատրոնի դերն ազգային հեռուստատեսության ձևավորման գործում (հայկական հեռուստատեսության գեղարվեստական հաղորդակցության սկիզբը՝ ազգային գրականություն-թատրոն-հեռուստատեսություն), Մանկավարժ, Ե., 2008, **Закарян В. П.**, Армянское телевидение: этапы развития армянского телевидения и тележурналистики. изд:во РАУ, Е., 2012, **Միրաքյան Վ.**, Ագրեսիվ հեռուստատեսության հետևանքները, Միտք վերլուծական կենտրոն, Ե., 2012, **Աբրահամյան Ա.**, Հեռուստասկնարկ. ժամանակակից դրսևորումները ՀՀ հեռուստաեթերում, (թեկն. ատեն.) Ե., 2012, **Ավետիսյան Ա.**, Հեռուստածրագրերի տրպաբանություն. հեռուստահաղորդումների դասակարգման չափանիշներ, ԵՊՀ հրատ., Ե., 2010, **Հակոբյան Վ. Թ.**, Հեռուստատեսային հաղորդակցության արդյունավետությունը, ԵՊՀ հրատ., Ե., 2016, **Пашаян Г.**, Тенденции развития современного телевизионного документального кино (на примере армянских документальных фильмов периода 1991-2010 гг.), (дисс. канд. филол. н.), Е., 2013, **Տիտանյան Կ.**, Հեռուստատեսություն. հասարակական կարծիքը կառավարում է եթերը, Էդիթ Պրինտ, Ե., 2007,

Ատենախոսության մեջ հանգամանալից վերլուծության է ենթարկվել նաև արտասահմանյան գրականությունը (Իգոր Բելյաև, Սերգեյ Մուրատով, Ռուդոլֆ Բորեցկի, Մարինա Գոլդովսկայա, Լյուդմիլա Շեստյորկինա, Քսենյա Շերգովա, Ալեքսանդր Պրոնին, Իգոր Ռոմանովսկի, Գալինա Պրոժոկո, Մայքլ Ռենով և այլք[4]): Հաշվի առնելով Հայաստանում հեռուստատեսային վավերագրական և գեղարվեստական կինոյի ուսումնասիրությանն ուղղված աշխատությունների սակավությունը, փորձ է արվել ներմուծել արտասահմանյան վերլուծաբանների կիրառած մեթոդաբանության որոշակի տարրեր:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքը նվիրված է Հայաստանի հեռուստաթերում վավերագրական և գեղարվեստական կինոյի ծրագրավորման և ձևաչափի առանձնահատկությունների ուսումնասիրությանը:

Ատենախոսության նպատակն է.

ա) Վերլուծել հայաստանյան հեռուստաթերում առկա վավերագրական, գեղարվեստական կինոնկարների ծրագրավորման քաղաքականության առանձնահատկությունները, համակարգել ձևաչափային բազմազանությունը:

բ) Հիմնվելով հայ և արտասահմանյան գիտնականների կատարած ուսումնասիրությունների վրա՝ ուղղված հեռուստատեսություն-կինո կապին, ներկայացնել հնարավորինս ընդգրկուն հետազոտություն՝ հիմնավորված վիճակագրական տվյալներով և փաստերով:

Գալստյան Ս., Հայացք մեր կինոյին: Պատմությունը և ներկան, Ա.հ, Ե., 2011, **Калантар К.,** Очерки Истории армянского кино. Наири, т.1, Е., 2004, , Наири, т.2, Е., 2007.

[4] Տե՛ս **Беляев И.**, Спектакль документов.Откровения телевидения, М., Гелеос, 2005; Такая жизнь, М., ФГОУ ДПО ИПК работников ТВ и РВ, 2011; **Муратов С.А.**, Документальный телефильм. Незаконченная биография., М., ВК, 2009; **Борецкий Р.А.**, Беседы об истории телевидения, Икар, М., 2011; Бермудском треугольнике ТВ, М., МГУ, ИКАР, 1998; **Голдовская М. Е.**, Творчество и техника, М., Искусство, 1986; Женщина с киноаппаратом // Искусство кино, 1991, № 6; **Шестеркина Л.П.**, Николаева Т.Д., Методика телевизионной журналистики, М., Аспект Пресс, 2012; **Шергова К.А.**, Становление жанров документального телекино, М., Академия медиаиндустрии, 2016; **Пронин А. А**., Mass-док: презумпция нарративности, Санкт-Петербург., ИД «Петрополис», 2017; **Романовский И.И**., Масс-медиа. Словарь терминов и понятий., М., Союз журналистов России, 2004; **Прожико Г.С**., Концепция реальности в экранном документе, М., ВГИК, 2004; **Renov M.**, Theorizing Documentary - New York&London.: Routledge, 1993.

Ատենախոսության խնդիրներն են.

- Կատարել Հայաստանի հեռուստաընկերությունների՝ 2013-2017թթ. ծրագրերի մշտադիտարկում (մոնիթորինգ):
- Սահմանել և ուսումնասիրել «հեռուստատեսային վավերագրական կինո» հասկացությունը՝ ընդգծելով վերջինիս կարևորագույն հատկանիշները:
- Մշակել հայաստանյան հեռուստաթերում առկա վավերագրական, գեղարվեստական կինոյի ձևաչափային համակարգի վերլուծության հայեցակարգ:
- Համակարգել վավերագրական և գեղարվեստական կինոյի ծրագրավորման միտումները, քաղաքականությունը, եթերային նշանակությունը, թեմատիկ և բովանդակային առանձնահատկությունները:
- Ուսումնասիրել հեռուստաընկերությունների ծրագրավորման ներկայիս քաղաքականության հանդեպ հեռուստատեսային և համացանցային կինոլսարանի վերաբերմունքը, կարծիքը, դժգոհությունները և ըստ այդմ ձևակերպել հեռուստածրագրավորման քաղաքականության կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեմային առնչվող գիտական գրականության վերլուծությունը ցուցադրում է հայաստանյան հեռուստաթերի հանգամանալից ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ պայմանավորված ազգային մտածելակերպի, արժեհամակարգի, աշխարհայացքի յուրահատկություններով:

Սույն ուսումնասիրությունը առաջիններից է հայաստանյան հեռուստաթերում վավերագրական, գեղարվեստական կինոյի, հեռուստասերիալների ծրագրավորման, ձևաչափային առանձնահատկությունների, թեմատիկ ուղղվածության, բովանդակային հիմքի հետազոտության առումով:

Աշխատության գիտական նորույթը: Հայաստանի հեռուստաընկերությունների վերջին 5 տարիների (2013-2017թթ.) ծրագրերի մանրազնին ուսումնասիրության հիմքով առաջարկվում է.

- Հեռուստատեսային վավերագրական, գեղարվեստական կինոյի՝ ուսումնասիրված, գիտականորեն հիմնավորված և դասակարգված ձևաչափային համակարգ:
- Հայաստանյան հեռուստաընկերությունների եթերում առկա վավերագրական, գեղարվեստական կինոյի ծրագրավորման արդի միտումների և առանձնահատ-

կությունների վերլուծություն՝ ամրապնդված վիճակագրական լայն հենքով:

Ատենախոսության գործնական նշանակությունը: Հեռուստածրագրավորման՝ աշխատանքում քննված խնդիրների լուծման տարբերակներն ու առաջարկները կարող են կիրառվել Հայաստանի հեռուստաընկերությունների առօրյա և հեռանկարային գործունեության ընթացքում, ինչպես նաև բուհական ուսումնական գործընթացներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Վերոնշյալ խնդիրների իրագործման նպատակով օգտագործվել է գիտական մեթոդների համալիր՝ մասնագիտական գրականության վերլուծություն, տեսական և գործնական ուսումնասիրություններ, եթերացանցի մշտադիտարկում, համեմատություններ, արդյունքների համակարգում, սոցիոլոգիական հարցումներ, արտասահմանյան փորձի քննություն: Հետազոտության համար տեսամեթոդական հիմք է հանդիսացել Հայաստանի հեռուստաընկերությունների վավերագրական և գեղարվեստական կինոնկարների, հաղորդաշարերի ուսումնասիրությունը, վերլուծությունը, դասակարգումն ու համապատասխան գործընթացների օրինաչափությունների բացահայտումը: Ուսումնասիրվել են Հայաստանի 12 հեռուստաընկերությունների («Հանրային հեռուստաընկերություն», «Հ2», «Շողակաթ», «Արմենիա», «Արմնյուզ», «Շանթ», «Կենտրոն», «ԱՐ», «Հ3», «ԱԹՎ», «Արարատ», «Երկիր մեդիա») ծրագրերը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ

Աշխատանքում դիտարկվել են Հայաստանի հեռուստաընկերությունների 2013-2017 թթ. ծրագրերը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, առաջարկություններից, գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի ընտրությունն ու արդիականությունը, ընդգծվում գիտական նորույթը, հետազոտության նպատակներն ու խնդիրները, ներկայացվում է թեմայի ուսումնասիրվածությունը, մեթոդաբանությունը, աշխատության տեսական և գործնական նշանակությունը:

ԳԼՈՒԽԱՌԱՋԻՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ԿԻՆՈՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Առաջին գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից, որոնք միտված են համապարփակ ներկայացնելու վավերագրական կինոյի ծրագրավորման և ձևաչափի առանձնահատկությունները Հայաստանի հեռուստաընկերությունների եթերում:

Առաջին ենթագլխում անդրադարձ է կատարվում վավերագրական կինոյին, նրա անցած ուղուն, Հայաստանի հեռուստատեսության կազմավորման գործում վերջինիս մեծ դերակատարմանը, Հայաստանի հեռուստատեսություն-վավերագրական կինո ժամանակակից կապին և արդի միտումներին: Առանձնակի ուշադրություն է հատկացվում հեռուստատեսային վավերագրական կինոյի վերաբերյալ տարաբնույթ մոտեցումներին, որոնք, երևան գալով սկսած 1950-ական թվականներից, նպատակ էին հետապնդում հստակեցնելու վավերագրական կինոյի տեղը էկրանային արվեստներում: Նման բազմազան մոտեցումների համատեքստում, երբ մի կողմից՝ վավերագրական կինոն ընկալվում էր որպես արվեստի տեսակ, մյուս կողմից՝ «կենդանի» հեռուստատեսության բաղկացուցիչ մաս և լրագրություն, ընդգծվում են «և՛-և՛» այն մոտեցումները, որոնք, լինելով արդիական նաև այսօր, կարևորում են վավերագրական կինոյի միջառարկայական բնույթը: Հեռուստավավերագրական կինոն լրագրության և արվեստի, հեռուստատեսության և կինեմատոգրաֆիայի, հրապարակախոսության և էկրանային դրամատուրգիայի համադրում է:

Հեռուստատեսությունը վավերագրական կինոյի կարևորագույն այն հարթակն է, որը նաև մեծապես նպաստում է վերջինիս զանգվածայնության ու տարածմանը:

Երկրորդ ենթագլխում կարևորվում է վավերագրական կինոյի՝ հեռուստատեսային և ոչ հեռուստատեսային տեսակների տարանջատումը: Որքան էլ փոքր էկրանը եթերում տեսականորեն հավասար հնարավորություններ ստեղծի հեռուստատեսային և ոչ հեռուստատեսային վավերագրական կինոնկարների համար, գործնականում պատկերն այլ է: Ծրագրում տեղ են գտնում վավերագրական այն ֆիլմերն ու հաղորդումները, որոնք պարունակում են հեռուստատեսային կարևորագույն մի շարք հատկանիշներ՝ պարզ, մատչելի մեկնաբանված հեռուստալեզու, ձևաչափային մոտեցում, եթերային երկարաժամկետության,

պարբերականության, զանգվածայնության, ցիկլայնության որակ, ինֆոզվարճանքի տարրեր և այլն: Նշվածներից զուրկ է ոչ հեռուստատեսային, կամ ինչպես անվանում են նաև, հեղինակային, փառատոնային, ոչ ձևաչափային վավերագրական կինոն, որը հազվադեպերևույթ է հայաստանյան հեռուստաթերում:

Երրորդ ենթագլխում քննվում են հայաստանյան հեռուստատեսային վավերագրական կինոյի ժանրաձևաչափային առանձնահատկությունները: Առանձնակի ընդգծվում է «հեռուստատեսային վավերագրական կինո» հասկացությունը: Առաջին հայացքից պարզ թվացող այս տերմինն իրականում բազմակողմանի և մեծ համակարգ է, որն ունի մանրազնին ուսումնասիրության անհրաժեշտություն: Հեռուստավավերագրական կինոն «հեռուստատեսային ստեղծագործություն է, որի հիմքում ընկած է վերջինիս կոմպոզիցիոն կառուցվածքը կազմակերպող վավերագրական-սյուժետային իրադարձություն»[5]: Առանձին-առանձին դիտարկվում և հիմնավորվում են հեռուստատեսային վավերագրական կինոյի՝ հայաստանյան հեռուստաթերում առավել տարածված ձևաչափերը՝ հեռուստաակնարկ[6], տեսաֆիլմ, կրթաճանաչողական բնույթի պատմավավերագրական հեռուստաֆիլմ, վավերագրական դրամա, քարոզչական-ագիտացիոն ֆիլմեր և հաղորդումներ:

Հայաստանի հեռուստատեսությունում վավերագրական կինոյի վերոհիշյալ ձևաչափերը կատարում են մշակութայինլուսավորչական, կրթադաստիարակչական, համընդհանուրմիավորող, քարոզչական և այլ կարևոր գործառույթներ՝ ազդեցություն ունենալով լսարանի արժեհամակարգի, հասարակական կարծիքի ձևավորման վրա:

Չորրորդ ենթագլխում ներկայացվում է վավերագրական կինոյի՝ հայաստանյան հեռուստաընկերությունների ծրագրավորման առանձնահատկությունները: Ուսումնասիրելով Հայաստանի 12 հեռուստաընկերությունների՝ 2013-2017թթ. ծրագիրը՝ նշենք, որ վավերագրական կինոն այսօր զբաղեցնում է հեռուստաընկերությունների ընդհանուր եթերաժամի միջինը՝ 5-6%-ը: Հետազոտության այս հատվածում ամփոփվում է հեռուստաընկերությունների ծրագրերում վավերագրական

---

[5] **Романовский И.И.,** Масс-медиа. Словарь терминов и понятий., М., Союз журналистов России, 2004, с.102.

[6] Ի տարբերություն գրական ակնարկի, որի մասին խոսելիս մենք գործ ենք ունենում պայմանական վավերագրության հետ (հեղինակն այս դեպքում գեղարվեստական արտահայտչամիջոցներով նկարագրում և պատմում է իրական իրադարձությունների, երևույթների, մարդկանց մասին)՝ հեռուստաակնարկի պարագայում վավերագրությունը կարևոր է և առանցքային՝ ամրապնդված արձանագրված փաստերով և փաստաթղթերով:

կինոյի դերն ու նշանակությունը, արժեքն ու ծավալը, հեռարձակման ժամանակահատվածը և այլն: Բերվում են մեծ թվով վիճակագրական տվյալներ, որոնք առավել բովանդակային են դարձնում վավերագրական կինոյի հեռուստածրագրավորման արդի միտումներին և առանձնահատկություններին ուղղված ուսումնասիրությունը:

ԳԼՈՒԽԵՐԿՐՈՐԴ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿԻՆՈՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Երկրորդ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից, որոնցում անդրադարձ է կատարվում Հայաստանի հեռուստաընկերությունների ծրագրի կարևորագույն և անփոխարինելի բաժնին՝ գեղարվեստական կինոյին:

Առաջին ենթագլխում դիտարկվում են գեղարվեստական կինոյի տեսակները եթերացանցում (գեղարվեստական կինոնկար (մեծ կինո), հեռուստաֆիլմ, հեռուստասերիալ): Գեղարվեստական կինոնկարը Հայաստանի հեռուստածրագրի կարևորագույն բաղադրիչներից է, որը շարունակում է ունենալ զանգվածային լսարան: Ենթագլխում անդրադարձ է կատարվում հեռուստատեսությամբ ցուցադրվող գեղարվեստական կինոնկարների ընկալման առանձնահատկություններին:

Հեռուստաֆիլմի մասին խոսելիս հարկ է նշել, որ այն իր նախկին տեսքով գրեթե դադարել է գոյություն ունենալուց: Թվային տեխնոլոգիական առաջընթացը, համացանցի ստեղծումը, շուկայում 16:9 լայնաֆորմատ, բարձր կետայնությամբ հեռուս-տացույցների տարածումը, ստանդարտ հստակության անալոգային հեռուստատեսության՝ բարձր հստակության թվային հեռուստատեսության վերափոխումը պատճառ են հանդիսացել հեռուստաֆիլմի ձևափոխությանը: Կինոյի և հեռուստատե-սության տեխնիկական հատկանիշների նույնականացման համատեքստում «հեռուստաֆիլմ» տերմինը, որը վերաբերում էր հեռուստատեսային հեռարձակման նպատակով ստեղծված գեղարվեստական ֆիլմերին՝ օժտված փոքր էկրանին բնորոշ հատկանիշներով, աստիճանաբար դուրս է գալիս կիրառումից (վերոնշյալ տերմինն այսօր լիովին չի արտացոլում հեռուստատեսային գեղարվեստական ֆիլմի բնույթը: Եթե նախկինում նման որակի ֆիլմերը ստեղծվում էին բացառապես հե-ռուստատեսային հեռարձակման համար, ապա այսօր շատ են օրինակները, երբ նման ֆիլմերը նույն հաջողությամբ

ցուցադրվում են նաև մեծ էկրանին): Փոխարենը լայն տարածում են գտնում պարզապես «գեղարվեստական ֆիլմ», «բազմասերիանոց ֆիլմ» կամ «մինի-սերիալ» տերմինները:

Ենթագլխում անդրադարձ է կատարվում նաև հեռուստասերիալներին, որոնք վերածվել են վարկանիշային մրցավազքի գլխավոր զենքի՝ հեռուստալսարանի վրա, հեռուստաընկերությունների ծրագրերում ունեցած վիթխարի ազդեցությամբ:

Երկրորդ ենթագլխի հետազոտության առարկան հայաստանյան վարկանիշային հեռուստաընկերությունների ծրագրերի սերիալային գերհագեցվածության խնդիրն է գեղարվեստական որակի, լեզվի հիմնահարցերի համատեքստում: Խնդրի դրդապատճառներն ու նախադրյալները պարզելու նպատակով՝ հետադարձ հայացք է ուղղվել ՀՀ եթերացանցում սերիալների անցած ուղուն, դասակարգվել է և առանձին-առանձին ուսումնասիրվել սերիալների յուրաքանչյուր շրջանը իր ծրագրային առանձնահատկություններով: Ըստ կատարված ուսումնասիրության՝ սերիալների անցած ուղին բաժանվել է երեք շրջանների՝ «Էներգետիկ ճգնաժամի շրջան»՝ 1991-1996թթ, «Լատինամերիկյան հեռուստանովելների շրջան»՝ 1996-2006 թթ., «հայկական հեռուստասերիալների շրջան»՝ 2006-ից մինչ օրս:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ծրագրում սերիալների նման խտության և հագեցվածության պատճառով եթերային փրայմ թայմում կրճատվում է այլ ձևաչափի հաղորդումների թվաքանակը: Եթերացանցում ունենալով միանման սերիալներ՝ տեղի է ունենում վարկանիշային հեռուստաընկերությունների ծրագրային քաղաքականության նույնացում: Մեծ թվով ցածրորակ սերիալները վերածվում են ոչ գրագետ լեզվի, խեղաթյուրված արժեհամակարգի քարոզչության:

Հարկ է նշել, որ ոչ միայն դիտարկվում են առկա խնդիրները և բացասական հետևանքները, այլև առաջարկվում են հնարավոր լուծումներ:

Երրորդ ենթագլխում ամփոփվում են Հայաստանի 12 հեռուստաընկերությունների 2013-2017թթ. ծրագրերի մշտադիտարկման արդյունքները, որից ելնելով՝ ընդգծվում են գեղարվեստական կինոյի դերն ու նշանակությունը ներկայիս հեռուստածրագրում, պահանջարկը, ծավալը և այլն: Որքան էլ գեղարվեստական կինոնկարները մեծ տեղ են գրավում եթերում (2013-2017թթ. գեղարվեստական կինոնկարը կազմել է հեռուստաընկերությունների ընդհանուր եթերաժամի միջինը՝ 19-20%), այսօր բացակայում է վերջիններիս հստակ ուրվագծված ծրագրավորման քաղաքականությունը. «ցանկացած ծրագրային

կամ ժամանակային բացը փոքր էկրանին հեռուստաընկերությունները լրացնում են տարբեր բնույթի և ուղղվածության կինոնկարներով: Մինչդեռ ցանկացած կինոնկարի եթեր հեռարձակումը պետք է ծրագրային մոտիվներ և պատճառներ ունենա»[7]: Ենթագլխում անդրադարձ է կատարվում նաև հեռուստասերիալների ծրագրավորման առանձնահատկություններին: Վերջիններս ևս մեծ տեղ են գրավում հեռուստաընկերությունների ծրագրում՝ կազմելով ընդհանուր եթերաժամի միջինը՝ 17-18%: Տարբեր օրինակներով փաստվում է սերիալների մեծ ազդեցությունը վարկանիշային մրցավազքում:

ԳԼՈՒԽԵՐՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԻՆՈԼՍԱՐԱՆԱԸ ԵԹԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՑԱՆՑՈՒՄ

Երրորդ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից, որոնցում ներկայացվում է հայաստանյան ժամանակակից հեռուստատեսային և համացանցային կինոլսարանը:

Առաջին ենթագլխում ամփոփվում է 2017թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին իրականացրած հարցման[8] արդյունքները՝ նվիրված վավերագրական և գեղարվեստական կինոլսարանին: Ներկայացվում է հարցման մասնակիցների վերաբերմունքը վավերագրական, գեղարվեստական կինոնկարներին, հեռուստաընկերությունների ծրագրային քաղաքականությանը, նրանում առկա խնդիրներին: Նշվում են լսարանի դժգոհություններն ու առաջարկները:

Երկրորդ ենթագլխում ուսումնասիրվում է հայաստանյան վարկանիշային հեռուստաընկերությունների յուրաքանչյուր առաջատար ալիքները՝ «Հանրային հեռուստաընկերություն», «Արմենիա», «Շանթ», «ՊանԱրմենիան», որոնք այսօր ունեն մեծ լսարան (07/04/17թ. տվյալներով վերջիններս ունեն համապատասխանաբար՝ 72 հազ., 208 հազ., 292 հազ., 307 հազ. բաժանորդ): Այսօր հեռուստատեսություն դիտելը արտահայտությունը չի սահմանափակվում միայն հեռուստացույց

---

[7] **Երիցյան Ս.Ս.**, Հեռուստատեսություն. Ակունքներից մինչև ժամանակակից զարգացումներ, Ե., Էդիթ Պրինտ, 2009, էջ 75:

[8] Հարցումն իրականացվել է 2017թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Երևան քաղաքում, որին մասնակցել է 400 մարդ, մասնակիցները տարիքային 5 խմբերից են՝ 14-17 տ., 18-24 տ., 24-35 տ., 36-45 տ., 45 տ. և ավելի:

սարքը դիտելով. կարելի է «հեռուստացույց դիտել» համացանցում՝ ուղիղ հեռարձակմամբ, տարատեսակ պլանշետների և սմարթֆոնների միջոցով՝ նրանց համար նախատեսված հավել-վածների և ծառայությունների շնորհիվ, որոնք արդեն հասանելի են Հայաստանում: Ժամանակակից նման տեխնոլոգիաները հեռուստատեսությանը հնարավորություն են տալիս ընդլայնել իր լսարանը՝ դուրս գալով հեռուստաէկրանի սահմաններից: Օգտագործելով ժամանակակից վիդեո-հոսթինգային տեսահարթակներ՝ հեռուստաընկերություններն իրենց հաղորդումներն ու ֆիլմերը հասանելի են դարձնում թվային լսարանին՝ վերջինիս պարգևելով հեռուստացույց դիտելու այլընտրանքային տարբերակ: Ենթագլխում ներկայացվում է յութուբյան պլիքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ, որոնք ընդգծում են ժամանակակից համացանցային կինոլսարանի առանձնահատկությունները: Օգտագործելով յութուբն իբրև նախագծերի արխիվացման հարթակ՝ հեռուստաընկերությունները ստանում են Հայաստանի, Արցախի և Սփյուռքի միջև յուրահատուկ «կամրջի» ստեղծման հնարավորություն՝ հասանելի դարձնելով հեռուստատեսային երաժշտական, երգիծական հաղորդումներն ու ֆիլմարտադրությունն իր բոլոր դրսևորումներով (սերիալներ, հեռուստաֆիլմեր և այլն): Յութուբը նաև երիտասարդների համար վերածվում է հեռուստատեսություն դիտելու այլընտրանքային տարբերակի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, ելնելով կատարված հետազոտություններից՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ժամանակակից տեղեկատվական, թվային տեխնոլոգիաների, համացանցի՝ հեռուստածրագրավորման, հեռուստատեսային ֆիլմարտադրության վրա ունեցած ազդեցության համատեքստում՝ վավերագրական և գեղարվեստական կինոնկարները Հայաստանի հեռուստաընկերությունների ծրագրերի կարևորագույն և անփոխարինելի մասն են:
2. Հայաստանի հեռուստահաղորդացանցում վավերագրական կինոնկարները զբաղեցնում են ընդհանուր եթերաժամի միջինը 5-6%-ը՝ կատարելով կրթադաստիարակչական, մշակութային-լուսավորչական, համընդհանուր-միավորող, քարոզչական գործառույթներ:

3. Հեռուստավավերագրական կինոն ձևաչափային բարդ համակարգ է եթերում: Հայաստանի հեռուստաընկերությունների ծրագրերում հեռուստատեսային վավերագրական կինոյի առավել տարածված ձևաչափերն են՝ հեռուստասկանարկը, տեսաֆիլմը, գիտահանրամատչելի, կրթաճանաչողական պատմավավերագրական հեռուստաֆիլմերը, վավերագրական դրաման, ագիտացիոն բնույթի վավերագրական տարբեր հաղորդաշարերն ու կինոնկարները:
4. Նպատակահարմար է ընդունել հեռուստավավերագրական կինոյի վերլուծության և գնահատման հետևյալ չափանիշները.
   - ձևաչափային մոտեցում,
   - պարզ, մատչելի մեկնաբանված հեռուստալեզու,
   - եթերային պարբերականություն,
   - զանգվածայնության, երկարաժամկետության, ցիկլայնության որակ,
   - ինֆոզվարճանքի տարրերի առկայություն:
5. Հայաստանի հեռուստաընկերությունների ծրագրերում գեղարվեստական կինոնկարները զբաղեցնում են ընդհանուր եթերաժամի միջինը 19-20%-ը: Հարկ է նշել, որ ներկայումս կա գեղարվեստական կինոնկարների ծրագրավորման քաղաքականության վերանայման անհրաժեշտություն, քանի որ կինոնկարները եթերում հայտնվում են առանց հստակ մոտիվներ և պատճառներ ունենալու:
6. 2013-2017 թթ. «Արմենիա», «Շանթ», «ԱԹՎ» հեռուստաընկերությունների ընդհանուր եթերաժամի՝ համապատասխանաբար միջինը 44%, 49%, 23% զբաղեցնում են սերիալները: Ծրագրում սերիալների նման ծավալը ձևաչափային ճգնաժամի, հեռուստաընկերությունների ծրագրային քաղաքականության նույնացման, վիճակագրական լարանի սեղմման պատճառ է հանդիսանում:
7. Հեռուստանախագծերի համացանցային առաջմղումը մեծ ազդեցություն է ունենում հեռուստաընկերությունների այժմյան ծրագրավորման քաղաքականության վրա: Հայաստանյան հեռուստաընկերությունների յուրաքանչյուր ալիքներն այսօր ոչ միայն հեռուստացույց դիտելու այլընտրանքային տարբերակ են, այլև Հայաստանի և Սփյուռքի միջև յուրօրինակ «կամրջի» ստեղծման հնարավորություն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով Հայաստանի հեռուստաընկերությունների՝ վավերագրական, գեղարվեստական կինոյի ծրագրավորման ներկայիս վիճակն ու առկա խնդիրները, հեռուստաընկերություններին առաջարկում ենք.

1. Վերանայել հեռուստատեսային վավերագրական կինոյի ծրագրավորման քաղաքականությունը՝ ընդլայնելով վերջինիս եթերաժամը և բարելավելով ցուցադրման ժամանակահատվածները:
2. Համագործակցային հարաբերություններ հաստատել վավերագրական կինոարտադրության մասնագիտացված ընկերությունների հետ: Որակյալ արտադրանքի ստեղծմանն ուղղված նման երկկողմանի փոխհարաբերությունները կնպաստեն հայաստանյան հեռուստաեթերում վավերագրական կինոյի ձևաչափային և թեմատիկ բազմազանությանը:
3. Կրճատել հեռուստասերիալների քանակը եթերում: Հարկավոր է ձևավորել մալուխային հեռուստադաշտ և ծրագրային յուրահատուկ քաղաքականությամբ աչքի ընկնող մալուխային հեռուստաընկերություններ, որոնք ֆիլմարտադրության ոլորտում կհաստատեն մրցակցային նոր հարաբերություններ:
4. Վերանայել եթերում առկա սերիալների թեմատիկ և բովանդակային ուղղվածությունը՝ հաշվի առնելով եթերում տարածված հայկական և հնդկական օճառային սերիալների մեծ թվաքանակը:
5. Անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել հեռուստատեսային համացանցային լսարանին: Որպես նախատիպ դիտարկելով «Շանթ», «Արմենիա TV», «Պանարմենիան TV», «Հանրային հեռուստաընկերություն» յութուբյան ալիքների արդյունավետ գործունեությունը, հեռուստաընկերություններին առաջարկվում է ամբողջովին և նպատակասլաց կերպով օգտագործել ժամանակակից վիդեո-հոսթինգային տեսահարթակների ողջ գործիքավորումը:

Ատենախոսության թեմայով հրատարակված հոդվածներ

1. **Степанян А.** Киноязык телевидения: особенности восприятия, «Научная дискуссия: вопросы филологии, искусствоведения и культурологии», М., Интернаука, № 9 (48), 2016, с. 88-91.

2. **Степанян А.** Сериалы нового поколения – вид киноискусства на ТВ, «Научная дискуссия: инновации в современном мире», М.: Интернаука, № 6 (49), 2016, с. 140-147.

3. **Ստեփանյան Հ**. Հայկական հեռուստատեսային կոնտենտի ինտերնետ արխիվացումը Յութուբում (YouTube.com), «Ակունք: գիտական հոդվածների ժողովածու», Ե., ԵՊՀ հրատ., Թիվ 2(16), 2017, էջ 187-193:

4. **Степанян А.** Этапы развития сериалов в телевизионной программе Армении, «Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение. Вопросы теории и практики», Тамбов.: Грамота, 2017. № 12(86): ч.5, с. 219-221.

5. **Степанян А.** Особенности авторского и телевизионного документального кино, «Филологические науки. Вопросы теории и практики», Тамбов.: Грамота, 2018. № 2 (80). ч.5, с. 44-46.

6. **Степанян А.** Телеочерк – как один из ключевых форматов телевизионного документального кино Армении, «Ակունք: գիտական հոդվածների ժողովածու» - Ե., ԵՊՀ հրատ., Թիվ 1(18), 2018, էջ 176-181:

Айк Ваганович Степанян

ОСОБЕННОСТИ ПРОГРАММИРОВАНИЯ И ФОРМАТА СОВРЕМЕННОГО ДОКУМЕНТАЛЬНОГО И ХУДОЖЕСТВЕННОГО КИНО В ЭФИРЕ ТЕЛЕКАНАЛОВ АРМЕНИИ

РЕЗЮМЕ

Диссертация на соискание ученой степени кандидата
филологических наук
по специальности 10.01.06 – «Журналистика»

Защита состоится 11.07.2018г. в 12^{00} часов на заседании специализированного Совета ВАК 012, действующего при ЕГУ, по адресу: Ереван, улица Хачатура Абовяна 52/а, ЕГУ, корпус филологического факультета, аудитория 202.

Диссертация посвящена изучению нерушимой связи кино–телевидение Армении, особенностей программирования и формата документальных и художественных фильмов в эфире армянских телекомпаний.

Актуальность и практическая значимость выбора темы обусловлена теми изменениями, которые происходят в эпоху цифровых, информационных технологий и интернета. Они в значительной степени имеют влияние как на политику телевизионного программирования, форматные особенности телепроизводства, так и на формирование нового поколения телеаудитории.

Научная новизна диссертации обусловлена тщательным изучением программ армянских телекомпаний за последние 5 лет (2013-2017 гг.), в результате чего представляется, во-первых, хорошо изученная, научно-обоснованная и классифицированная система форматов, во-вторых, в результате мониторинга эфира телеканалов Армении подчеркиваются современные тенденции, особенности программирования документального, художественного кино.

Объектом диссертационного исследования является телевидение Армении, предметом – современные тенденции политики программирования документального и художественного кино телекомпаний Армении.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, рекомендаций, списка использованной литературы.

Во введении обосновывается выбор и актуальность темы, научная новизна, предмет, цели и задачи исследования.

Первая глава посвящена изучению особенностей программирования и формата документального кино в эфире телекомпаний Армении.

В первом параграфе первой главы автор обращается к современной связи телевидение –документальное кино Армении и актуальным тенденциям.

Второй параграф первой главы посвящен особенностям и свойствам телевизионного и нетелевизионного документального кино.

В третьем параграфе первой главы изучается, классифицируется, научно обосновывается и предлагается система форматов телевизионного документального кино Армении.

В четвертой подглаве представлены результаты изучения телепрограмм за 2013-2017 гг., роль и значение документального кино в эфире телекомпаний Армении.

Вторая глава посвящена особенностям программирования и формата художественного кино в программе армянских телекомпаний.

В первом параграфе второй главы рассматриваются виды художественного кино и их особенности в эфире.

Второй параграф второй главы относится к проблеме перезагруженности сериалами программ рейтинговых телекомпаний, их негативным последствиям и возможным решениям.

В третьей главе второго параграфа автор обращается к особенностям и тематике программирования художественного кино в эфире армянских телекомпаний.

Третья глава посвящена изучению армянской телевизионной и интернет киноаудитории.

В первом параграфе третьей главы обобщаются результаты опроса, в котором приняло участие 400 человек, проведенного с целью изучения телевизионной киноаудитории.

Во втором параграфе третьей главы изучаются армянская интернет киноаудитория, ведущие ютубовские каналы армянских телекомпаний.

В заключении работы представлен ряд выводов и рекомендаций, которые составляют основу проведенного исследования.

Hayk Stepanyan

CONTEMPORARY DOCUMENTARY AND FEATURE FILMS PROGRAMING AND FORMATTING CHARACTERISTIC FEATURES ON ARMENIAN TV

Summary

The Thesis for the degree of Candidate of Philological Sciences
Discipline 10.01.06 “Journalism”

Defense day: 11.07.2018. at 12^{00} pm at the session of the HAC Specialized Council (Higher Attestation Commission) 012 at Yerevan State University.

Address: Republic of Armenia, Yerevan, 52/A, Abovyan st., Yerevan, YSU, Faculty of Philology, room N202

This dissertation focuses on the strong relationships between Armenian TV broadcasting and movies, as well as explores the main features and basic concepts of programming and formatting the feature and documentary films on Armenian TV.

The relevance of the research is based on the changes that are taking place in this Internet era of information and digital technologies, changes that greatly impact on TV formatting and programming policy and audience formation.

The scientific innovation of this dissertation is based on the thorough research and analysis of the Armenian TV channels programs for the last 5 years (2013-2017).

The results of the research are presented as follows:

1. Scientifically sound and classified formatting system of feature films and documentaries.

2. As a result of TV monitoring, the thesis identifies the Modern tendencies and trends in the programming the feature and documentary films on Armenian TV.

The research object of the dissertation is Armenian TV, the subject is current tendencies of Armenian TV channels in programming and formatting documentary and feature films.

The dissertation consists of:

- Introduction
- Three chapters
- Conclusions and suggestions
- Reference list

Introduction - substantiates the topic selection and the relevance of the topic, highlights the scientific innovations, the aim and the goals of the research and the objectives.

1st Chapter- analyzes the main characteristics and features of programming and formatting the documentaries on the Armenian TV channels.

1st paragraph of the 1st Chapter- specifically focuses on the relationships between Armenian TV and documentary films.

2nd paragraph of the 1st Chapter- analyzes the characteristics of the documentaries (both TV and non TV).

3rd paragraph of the 1st Chapter-based on scientific investigation, demonstrates scientifically sound and classified system of formatting of the documentaries.

4th Subchapter- provides the results of the researches on the Armenian TV channels programs between 2013-2017 years, outlines the significance and the role that play the documentary films on Armenian TV.

2nd Chapter- discusses the key concepts and characteristics of programming and formatting the feature films on Armenian TV channels.

1st paragraph of the 2nd Chapter- displays the types and main characteristics of the feature films broadcasted by Armenian TV channels.

2nd paragraph of the 2nd Chapter- explores the issues related to the increased numbers of shows (series overload) on Armenian leading TV channels, highlights the negative consequences that arise and identifies the possible solutions.

3rd paragraph of the 2nd Chapter- refers to the tendencies in the programming and thematic peculiarities of the feature films on Armenian TV channels.

3rd Chapter- is a research study of the Armenian TV and Internet audience.

1st paragraph of the 3rd Chapter- summarizes the results of the audience survey including 400 participants.

2nd paragraph of the 3rd Chapter- is a research of the Armenian leading Youtube channels and Armenian Internet audience.

Conclusion - presents a number of conclusions and proposals that form the basis of the study.